ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

սեպտեմբերի 2021 թվականի №Ա
ք. Երևան

«ԷՆԵՐՋԻ ԷՍ ՋԻ ԷՅ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ «ԷՆԵՐՋԻ ԷՍ ՋԻ ԷՅ» ԱՐԵՎԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՈՒՄ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ (ՀԶՈՐՈՒԹՅԱՆ) ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԼԷ №0660 ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2019 թվականի դեկտեմբերի 24-ի №481Ա որոշմամբ «ՍՈՒՄԵՑ ՋԻ ՓԻ ԷՅ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված և 2020 թվականի մայիսի 20-ի №175Ա որոշմամբ «ԷՆԵՐՋԻ ԷՍ ՋԻ ԷՅ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) անվամբ վերաձևակերպված «Էներջի Էս Ջի Էյ» արևային էլեկտրակայանում (այսուհետ՝ Կայան) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0660 լիցենզիայի (այսուհետ՝ ԼԷ №0660 լիցենզիա) պայմանների 14-րդ կետի համաձայն՝ Ընկերությունը պարտավոր էր մինչև 2020 թվականի հուլիսի 25-ը Հանձնաժողով ներկայացնել Կայանի կառուցման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ)՝ դրական փորձագիտական եզրակացություններով, ինչը, սակայն, չի կատարվել, ի հետևանք որի՝ նշված ժամկետը, Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի (այսուհետ՝ Կարգ) 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, համարվել է երկարաձգված մինչև 2021 թվականի փետրվարի 25-ը,

բ) Ընկերությունը 2021 թվականի փետրվարի 25-ի գրությամբ Հանձնաժողով է ներկայացրել Կայանի կառուցման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության

պահանջներին համապատասխան փորձաքննություն չանցած նախագծային փաստաթղթեր, ինչը փաստվել է Հանձնաժողովի 2021 թվականի ապրիլի 21-ի №131Ա որոշմամբ և, Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, Նախագծի՝ Հանձնաժողով ներկայացման ժամկետը համարվել է երկրորդ անգամ երկարաձգված մինչև 2021 թվականի օգոստոսի 25-ը, սակայն Ընկերությունը նշված ժամկետում ևս չի ներկայացրել,

գ) Հանձնաժողովը 2021 թվականի օգոստոսի 30-ից հարուցել է վարչական վարույթ՝ Կարգի 47-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն ԼԷ №0660 լիցենզիայի գործողությունը կասեցնելու հարցի ուսումնասիրության նպատակով, որի մասին Ընկերությունը ծանուցվել է 2021 թվականի օգոստոսի 30-ի № ԳԲ/34.3-Մ2-12/2952-2021 գրությամբ,

դ) Ընկերությունը վարչական վարույթի շրջանակում քննարկվող հարցի առնչությամբ 2021 թվականի սեպտեմբերի 2-ի գրությամբ հայտնել է, որ նախագծի պետական համալիր փորձաքննության համար անհրաժեշտ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փորձաքննությունը գտնվում է իրականացման փուլում, որի ավարտից հետո միայն հնարավոր կլինի տվյալ նախագիծը ենթարկել պետական համալիր փորձաքննության,

ե) Կարգի 47-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ արտադրության լիցենզիա ունեցող անձի կողմից լիցենզիայով ամրագրված ժամկետում Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած կայանի կառուցման նախագիծը՝ դրական փորձագիտական եզրակացություններով, Հանձնաժողով չներկայացնելու դեպքում նշված ժամկետը համարվում է երկարաձգված նախկին ժամկետի չափով, բայց ոչ ավելի, քան մինչև լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածի ավարտը, իսկ 2-րդ անգամ երկարաձգված ժամկետում Նախագիծը Հանձնաժողով չներկայացնելու դեպքում արտադրության լիցենզիայի գործողությունը կասեցվում է,

զ) վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը ԼԷ №0660 լիցենզիայի պայմանների 14-րդ կետով սահմանված և երկրորդ անգամ երկարաձգված ժամկետում՝ մինչև 2021 թվականի օգոստոսի 25-ը, Նախագիծը չի ներկայացրել Հանձնաժողով, իսկ ներկայացրած պարզաբանումները չեն կարող հիմք հանդիսանալ Կարգի 47-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հետևանքի չկիրառման համար, և

հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետի 3-րդ ենթակետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. ԼԷ №0660 լիցենզիայի պայմանների 14-րդ կետով սահմանված և երկրորդ անգամ երկարաձգված ժամկետում՝ մինչև 2021 թվականի օգոստոսի 25-ը, Նախագիծը Հանձնաժողով չներկայացնելու հիմքով կասեցնել Ընկերության ԼԷ №0660 լիցենզիայի գործողությունը՝ մինչև կասեցման պատճառի վերացումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ այն ստանալու պահից 15-օրյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
սեպտեմբերի 2021թ.